

պէս յայտարարելու թէ «մենք առանձին չնորհ ենք վայելում ցաւազար մարդկութիւնը ամեն տեսակ ցաւերից բուժելու»։

Երբ որ կը բազմանան մեզ մօտ ճշմարիտ մասնագէտ բժիշկներ, որոնք իրաւ խղճմամբ կերպով կը զբաղվեն բժշկականութեան մի որոշ մասով, որոշ մասնագիտութեամբ,—այն ժամանակ մեր հասարակութեան հաւատը դէպի բժշկականութիւնը նորից կը վերականգնվի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 7-ին, թիֆլիսի հայ դերասանական խումբը Արքունական թատրոնում կը ներկայացնէ առաջին անգամ 1) «Հոբոսի», դրամա 5 գործողութեամբ, թարգմանութիւն Ն. Արեւիկայի և 2) «Շտապող երիտասարդ», վոդևիլ 1 գործողութեամբ, հեղինակութիւն Լաբիշի, թարգմանութիւն Ֆելքսի։ Ներկայացմանը կը մասնակցէ ամբողջ թատրոնական խումբը։ Սկիզբը 7½ ժամին երեկոյեան։

ԱՐՄԱԽԻՐԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 27-ին կայացաւ կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը։ Այդտեղ էլ, անդամների մէջ անտարբերութիւն էր նկատուում. մօտ 200 անդամներից ժողովին ներկայ էին ընդամենը 25 հոգի։ Սակայն ժողովը կայացած համարվեց, որովհետեւ երկուրդ անգամն էր հրապարակուած ընկերութեան ճիւղի վարչութեան չորս անդամների ընտրութիւնից, յետոյ, ընդհանուր ժողովը գրեթէ միաձայն որոշեց տարեկան 700 բուլբլ յատկացնել՝ մի տղայ և մի աղջիկ ուղարկել թիֆլիս, ուսանելու համար։»

Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէն չէր բաւականանալով հայոց ներկայացումներ տալով, թոյլ է տալիս որ իր արտօններից ոմանք մասնակցեն այլ և այլ կոնցերտներումն էլ։ Սակայն այդպիսով կոմիտէն համ իր, համ էլ իր արտօնների անունն է կտրում. միթէ կարելի է թոյլ տալ որ տիկին Սիրանուշ, դուրի լինելով երաժշտական պատրաստութիւնից և ձայնից՝ երգէր կոնցերտներում կամ պ. Արաքսեան իր ոչ ուսուցական արտասանութեամբ՝ ուսուց կուպլետներ կարդար Այդ տեսակ անճշտի երեւոյթին այս օրերս ներկայ ենք գտնվել թիֆլիսի Բանկային թատրոնում տուած կոնցերտին, որին մասնակցել են և Նիդալարեան ու Սալիսարի երգիչները։ Ժամանակ է արդէն փոքր ինչ աւելի համեստ

նում են ամբողջ, վերջ են տալիս խռովութեանը, վիպանք և մարդիկ են պատրաստուած դատաստանում այս կամ այն հասարակական գործը խաղաղացնելու համար, պարզում են, շատ անգամ, իշխանութիւն ներկայացնող մարդկանց այս կամ այն գործի խնդիրները, իսկ զարկ առնելու ասված արեան գործերին, այդտեղ մեծ դեր են խաղում դրանք շատ անգամ։ Մեր ժողովուրդը, իր ամբողջ վրէժնալիքներով հանդերձ, լատիւսներ վարեցնում է դատաստանից. նա դատաստանը աշխատում է վերջացնել անայլով կերպով. այդ գործում օգնում են նրան իր երկրի առաջատոր մարդիկը, որոնց օգնութեանը և դիմում է նա. շատ անգամ գործը վերջանում է տնային կերպով, հաշտութեամբ, շատ անգամ էլ դատարանում առանց որ և է հետեւանքի. վիպանքին սաստում, վախեցնում են, կաշառում են, գործը երկարում է, ոչինչ, ի հարկէ, այդպիսով չէ պարզուում, վերջանում է, ինքն ըստ ինքեան, ոչնչով և ինքը գործը։ Այդ այդպէս լինելուց յետոյ, ինչ ասել կուզէ, որ ժողովուրդը անպայման հաւատում է այդ մարդկանց, որոնք նրանց ամեն մի գործում չեն խնայում իրանց միջամտութիւնը և այդ հաւատը ժառանգաբար անցնում է մի սերունդից մյուսին, ինչպէս անցնում է մեր այսպէս ասված ազնաւականներին և մեծերի սերունդներում ժողովուրդի պէտքերին, շահերին թարգման և պաշտպան լինելով։ Միւս կողմից մեր երկրում դեռ շատ անգամ կը պատահէ անուանի մարդկանց, որոնք երբեմն մեծ հարստութիւն ունեն, իսկ այժմ անցնալի բացի մի քանի անշնան փուրանքներից ոչինչ չունեն. այդ մարդիկ, այ-

լինել, մենք դեռ շատ մեծ ներդրամութեամբ ենք վերաբերում դէպի մեր դերասանները, չունենալով զգուշել մեզ դեմ հասարակութիւնը. եթէ ոչ կարող էինք հայոց բնով վրա ամեն մի խաղացած դերը աւելի մանրակրկիտ կերպով քննել։ Ասեցէք խնդրեմ, կարելի է արդեօք Շէկսպիրի պիեսաների տիպերը այդպէս խաղալ ինչպէս «Յամառաղկայ սանձահարումն» պիեսայում խաղացին Տէր-Պետրոսեան, բայց մասնաւոր Սիրանուշ։ Տիկինը չէր ներկայացնում բնաւորութեամբ փչացած, յամառ, կամակոր աղջկայ տիպը, այլ ներկայացնում էր ջղաշին հիւանդութիւնից հոգեկան կատարութեամբ հասած մի հիւանդ կնոջ տիպը։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 30-ից հետեւելով. «Քանի մի օր է, որ եղանակը այստեղ ցրտել է. ամսին 28-ին այստեղ առաջին անգամ ձիւն եկաւ։ Ժողովուրդը յուսահատված է, որովհետեւ ոչ այդքանից քաղը, ոչ էլ աշնանային ցանքերը վերջացած չեն։»

Նոյեմբերի 4-ին թիֆլիսի մեծ թատրոնում մասնաւոր օպերային խումբը ներկայացրեց Բուբինշտէյնի «Գլեմոն» օպերան։ Թատրոնը կատարելապէս լի էր հասարակութեամբ։ Գլեմոնի դերում Նիդալարեան մեծ աշխուժութիւն ունեցաւ, մասնաւոր նա լաւ էր վերջին գործողութեան մէջ վատ չէր և Մադամեան՝ իշխանի դերում։

«Правит. Вѣстн.» լրագրում կարդում ենք, որ թիֆլիսում թուրքերին լեզուով հրատարակվող «Գեքլի» շաբաթաթերթը, որի խմբագիրն է Զեյալ-էֆէնդի Ունի-Ջադէ, դադարեցրած է համարվում։ Գաղարարման պատճառը, ինչպէս ասում են, վարձարժեքի անկումն էր. հրատարակութիւնն է։ Լրագիրը շատ քիչ բաժանորդ էլ ուներ, ընդամենը, ինչպէս հաղորդում են, 300 հոգի։

«Нов. Обозр.» հաղորդում է, որ երկրի վրացի կաթողիկոսներ խնդրամատոյց են լինում կառավարութեան, որ իրանց եկեղեցիներում նորից թոյլատրվի ժամատացութիւնը վարցերէն լեզուով կատարել, քանի որ նրանք լատիներէն լեզուն չեն հասկանում։ Ուստի լրագիրը միթէ չը գիտէ, որ վրացի կաթողիկոսներ չը կան աշխարհիս երեւոյթին, այլ կան միայն վրացի ազգային հայ-կաթողիկոսներ։

Ներկայացրել, ամսին 4-ին, հայ դերասանական միասնական խումբը, յօգուտ Ռուսաստանի սովետաւորներին, թիֆլիսի կառուածական բանկի թատրոնում մի ներկայացում տուեց։ Խաղացին Ն. Պոտեխինի «Օրվա չարիք» վերնագրով, պ. Ս. Արծրունու թարգմանած դրաման։ Խաղը անաղջ

նում ամենայնիւ, դեռ կարողացել են պահպանել ժողովուրդի մէջ այն պատիւը և նշանակութիւնը, որը ձեռք էին բերել այժմ ոչնչացած հասարակութեան միջոցով. բոլորովը հիմա էլ շարունակում է հարկաւոր դէպքերում դիմել նրանց, նա չէ մոռացել նրանց առատ աղ ու հացը, նա այժմ էլ նոյն պատկառանքով վերաբերում է այն մարդկանց, որոնց անունը երբեմն զոյրդեցնում էր այս կամ այն գաւառը և ես հարկաւոր եմ համարում ձեր առանձին ուշադրութիւնը դարձնելու, ընթերցող, մեր ժողովուրդական բնաւորութեան այդ երախտապարտ գծի վրա։

Մեր երկրի ամբողջ տարածութեան վրա, զբաղաւորապէս կենտրոններէն հեռու տեղերում, դուք շատ անգամ կարող էք տեսնել, թէ ինչ պատկառանքով վերաբերում է ամբողջ դէպի ցնցոտիներով պատած մի մարդ. նա էլ երբեմն հարուստ էր, նա էլ երբեմն շրջապատված էր տասնեակ սպասաւորներով, նա էլ օջախ է, ասում է մեր ժողովուրդը։ Այդ մարդիկ միշտ առաջնորդում են ամբողջ, իսկ ժողովուրդը մեղանում, ընթերցող, ոչ մի քայլ չէ անում առանց այդ մարդկանց. նրանք գիտեն ժողովուրդի հասարակական գործերը, նրանք ամեն տեսակ տեղեկութիւններ ունեն նոյն ժողովուրդի ընտանեկան հաղթը ու մի խնդիրների մասին։ Ահա, ընթերցող, այն մարդիկ, որոնք մեր կացութեան ամբողջ տարածութեան վրա առաջնորդել են մեր հասարակական կեանքը, այդ մարդիկ միշտ մեր երկրում առաջնակարգ դեր են խաղացել, դրանք էլ մեր ոյժերն են, դրանք էլ մեր ինտելիգենցիան են կազմում։ Ինչ ասել կուզէ, որ այժմ,

էր, դերասանները իրանց համապատասխան դերերում չէին։ Միակ բացառութիւն պ. Արեւիկան էր, հայր խաղալին դերում. նա իր խաղով հասարակութեան, որ հայերէն լեզուով անգամ կարելի էր դերը ներկայացնել։ Պ. Արաքսեան (Սէրգէ) իր դերը լաւ չէր իմանում, հետեւաբար և անհարթ էր խաղում։ Շատ դերասանները զրկւմ անտանելի էր։ Գրադիշկով որդուց ջահել էր երևում, իսկ տիկին Գրադիշկովա կարծես թէ իր աղջկայ դուստրը լինէր։ Թատրոնի հասարակութիւնը սովորականից քիչ էր. մուտքը հասաւ մօտ 400 ռուբլու։ Պիեսայի թարգմանութիւնը թոյլ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻՐԻՍՎԻ ԵՐԹԱՆԱՍՏԱՄԵԱՑ ՅՈՒՆԵԱՆԸ

Ուղերձներ, անշուշտ, պակաս չեն այսպիսի դէպքերում, բայց ուղերձներ, որոնց մասնակցողներն ու շարադրողները նոյնպէս հաշակաւոր մարդիկ լինին, որպէս այս անգամ, հաղիւթ է մի այլ անգամ տեղի ունենայ։ Նախ և առաջ Վիրիսովի անցեալ և ներկայ ընկերականներն էին միաբանվել դուռնու վատաւիտի մի ժողովածու ներկայացնելու, որ Լիբայի, հին ընթերցաններից աւագագործը, յանձնեց ուսուցչապետին։ Բացի դրանից բազմաթիւ առաջնակարգ հեղինակներ միաբանվել էին, մի ընդարձակ, երեք մեծադիր հատորների մէջ ամփոփված ուղերձով մեծ վարպետին իրանց սուրբ հատուցանելու։ Երբ Արեւիկան, դուռնու անցած մեծագումար աշխատակիցների, թէև սրանց մի մասը լոկ ժամանակաւորապէս էր Բերլին եկած, յօգուտ իրանց յանձնեց այդ ուղերձը, բոլոր հանդիսականները, ինչպէս այս օրին ամեն այդ տեսակի դէպքերում, բայց մասնաւոր այժմ, զգացին այդ մեծարանքի կարգից դուռնու մեծ նշանակութիւնը։ Այդ խիտ ամբողջ կազմողները բոլորն էլ առանց բացառութեան, յայտնի անուն կրող մարդիկ էին։ Սակաւ կը պատահէ տեսնել հաշակաւոր վիճակակիցների այդպիսի մի մեծ բազմութիւն, իրանց պատշաճակիցներից նրան, որին առանց նախանձի և ընդիմութեան յատկացնում են դերադրանքութեան բարբոնը, իրանց մեծարանքը մատուցանելու։ Ուղերձը պարունակում է յօդուածներ աշխարհիս ամեն երկրներից։ Սըր Զօգէֆ Լէյստեր, սըր Զէմ Պադետ, Զօրսէ և Սլմօն, տուել են յօդուածներ Անգլիայից, Պիօ Ֆօա, Բիցցօցիօ, Սանդալի, յօդուածներ վարձմի բարեկամը, Մարքիսֆալա և Զելի Իտալիայից, Պօպօ և Իվանովսկի Ռուսաստանից, Վուդ և Նեկօրի Ամերիկայից։ Եւ թէպէտ Ֆրանսիայից մասնակցել է միայն Բուշար, այնու ամենայն այդ աւելի մեծ երախտադրու-

ներ մեր կեանքի պայմանները փոխվել են, բարդվել և աւելի պահանջող է դարձել և ինքը կեանքը, երբ մեր աւելի թաւա, աւելի նոր ոյժերը, մեր երիտասարդութիւնը նոյնպէս ձգտում են մեր ժողովուրդի մէջ հեղինակութիւն և աղղեցութիւն ձեռք բերելու, մեր երկրի հին, առաջատոր մարդիկ, որ աւելի, այսպէս ասած, պահպանողական բանակ են կազմում, մինչև այժմ, պէտք է կամ քաշվեն, հեռանալին ասպարիզից, կամ յարմարվելով ժամանակի պէտքերին և պահանջներին, նոր ընթացք, նոր դիրք բռնեն։ Առաջ նրանք կատարելապէս անկախ էին, ոչ ոք, բացի իսկ ժողովուրդը անպայման հետեւում էր նրանց այն պատճառով, որ դրանք միակ մարդիկն էին, որոնք ժողովուրդին ուսուցանելու և առաջնորդելու ձգտում ունէին. բայց երբ նոյն ժամանակն էր իրանց հետ և կեանքի նոր պայմաններ բերեցին, երբ նոյն ժողովուրդի միջից մէկը միւսի ետեկից սկսեցին առաջ գալ անձնաւորութիւններ, որոնք աւելի մտածված, աւելի անկեղծ կերպով սկսեցին ձգտել դէպի նոյն դերը, որը առաջ մեր երկրում հասարակութեան մի յայտնի դասակարգի ժառանգական սեփականութիւն էր համարվում, այն ժամանակ առաջ եկաւ մի խուլ մըրցում այդ երկու, դեռ տակաւին անհաւասար ոյժերի մէջ, որոնցից մէկը սկսեց հինգիւն իր դասերի ընթացքում ձեռք բերած պատմական իրաւունքների վրա, միւսը ժամանակակից պահանջներին և պէտքերին... Այժմ, երբ այդ վերին աստիճանի հետաքրքիր էվոլյուցիան դեռ իր դարձացման սկզբնական շրջանի մէջն է, մեզ դը-

թեամբ պէտք է յիշատակվի։ Մասնակցողներին բոլորին թուել անկարելի է։ Յիշել պէտք են նաև Մեհնիօլ, Միւրա, Սոփիս, Ռեցիուս, Գերմանացի մասնակցողների թիւը չափազանց մեծ էր։ Արեւիկան, Գերհարդ, Լէյստեր, Նօթմա, Գել, Բիւդֆելդ, Սենատոր, Ֆօն Յիմմեր, Յիլեր և ուրիշ շատերը պատակաւ շարադրութիւններ են նուիրել։ Նոյն իսկ յօդուածներ որդին, Հանս Վիրիսով այդ ժողովածուի մէջ նուիրել է «Իր պիւրելի Տօրը» մի «սիրուն գրութեամբ» ձուլի դեղնու պարկի մասին, որ ախտաբանական դպրոցի առաջին ընթերցանաց Օ. Խարայել մասնաւորապէս խմբագրել ու նուիրել է։

Բերլինի բժշկական ընկերութիւնը կուռնայ շուտով իր սեփական տունը։ Այդտեղ կը լինի նրա նիստերին յատկացած առանձին դահլիճ, որ լոկ իր նպատակներին պիտի ծառայէ և այդ ընկերութիւնը վճուել է կախել այդ դահլիճում իբրեւ նրա նշանաւոր դարձը, այն մարդու պատկերը, որ կազմակերպել է այդ ընկերութիւնը, և կարելոյն չափ նպատակ է նրա առաջադիմութեանը և որին նա այնքան պարտական է։ Այդ մարդու հանձարեղ դէմքը կարող էր կենդանացրել ոչ այլ ոք, քան վարպետ Լէյստեր։ Արեւիկան մեծութեամբ նկարված նշանաւոր պատկերը ներկայացրեց առաջին նախագահին. երկուրդը նախագահը։ Սրտաբուլիս խօսքերով յանձնեց պատկերը յօդուածին պ. Ֆօն-Բերգման։

«Բերլինի բժշկական ընկերութիւնը ուղարկել է այստեղ այն երեք միաբանութիւններին, որոնք նրա շահերը պաշտպանելու կուռնան ունեն, ձեռնապատիւ յօդուած, ընկերութեան բարեւադրութիւնները մատուցանելու. որովհետեւ իր բոլոր շահերը, նպատակներն ու ձգտումները, ինչպէս նաև իր լուծած խնդիրներն ու վաստակները, իր հիմնարկութիւնը, զարգացումը և կարգուկանօնը, այդ ամենը ընկերութիւնը վերաբերում է ձեռք, որ իր նախագահն ու պատուաւոր անդամն է, ձեռք վաստակներին ու կառավարութեան։ Ձեր 25-ամեայ հասակից սկսած, մինչև այսօր—ասել է թէ անա 45 տարի է—դուք պատանցիք Բերլինի բժիշկների երկու ընկերութիւններին, որոնց դուք նախագահում էիք, ամենաբարձրունակ անդամը լինելու հաշակը, ինչպէս 1860 թվէն իրանական բժշկական ընկերութեան, նոյնպէս և 1891 թվին Բերլինի բժշկական ընկերութեան։

«Ես ինչպէս կարող եմ թուել այն ամենը, որ ձեռքով ձեռք են բերել այդ ընկերութիւնները բաւական է որ նրանք վկայ եղան այն նորանոր գիտելիքներ, որոնք առիթ տուին Բուշարի վերին անունը գերմանական պատուազգրքի մէջ գրուել և այն տախտակների վրա արձանագրել որոնց վրա գտնվում են մեծամեծ բժիշկների նրանց հետ անբաժան կապված կեանքի հետ»։

Ժուաբ է որչէն, թէ ինչ դերք կը բռնի ապագայում մեր գիւնականութիւնը. մեր առաջատոր մարդիկ կը զիջանեն արդեօք ժամանակի պահանջներին—կը ձուլվեն մեր հասարակութեան նոր խաւը—երիտասարդութեան հետ, թէ հաւատարիմ մնալով իրանց statu quo-ին, կը մնան մեզ համար որպէս անցեալի մի կենդանի պատճառ... Այդպէս միայն կարելի է ասել, որ մըրցումը, որ առ այժմ դեռ տակաւին խուլ կերպ է կատարվում, զգալի կերպով խախտել է այն ընթացքը, որ դարձնել է դարձել ընթացքը, որ վրա ժամանակի մի ամբողջ տարածութիւն ընթացումը պահպանվել են մեր աղաների աստիճանից իրաւունքները դէպի ժողովուրդը. Բէլի կարգ իրաւունքները դէպի ժողովուրդը. Բէլի իրաւունքները, պէտք է խոստովանվել, շատ հին պատմութիւն ունեն, տարիները առել են դրանց մի տեսակ իրաւական ոյժ, բայց կարծում ենք, որ այդ ոյժը, իր բոլոր պատկառելի հնութեամբ հանդերձ, պէտք է բաժանվի մասերի, պէտք է աւելի մեծ բանակի սեփականութիւն դառնայ և պէտք է վերջնապ այն ժառանգական ոյժի, որը պահպանում էր այդ իրաւունքները մինչև այժմ, մեր հասարակութեան մի յայտնի մասը մէջ... Այդ պահանջում է ոչ թէ միայն ժամանակի, այլ պահանջում են և մեր պէտքերը, մեր շահերը, իսկ այդ պէտքերը այնքան հասարակագործային, իսկ այդ պէտքերը այնքան իրաւունքներ, որ պէտք է վերջնապ այն ժառանգական ոյժի, որը պահպանում էր այդ իրաւունքները մինչև այժմ, մեր հասարակութեան մի յայտնի մասը մէջ... Այդ պահանջում է ոչ թէ միայն ժամանակի, այլ պահանջում են և մեր պէտքերը, մեր շահերը, իսկ այդ պէտքերը այնքան իրաւունքներ, որ պէտք է վերջնապ այն ժառանգական ոյժի, որը պահպանում էր այդ իրաւունքները մինչև այժմ, մեր հասարակութեան մի յայտնի մասը մէջ... հանջները և կեանքի նոր ձգտումները... Ստեփան Ղորղանեան

դոտորները անուանելով, որոնք մարդկային իմա-
ցականութեան սահմանները ընդլայնելով, եղել
են միշտ և են առաքելահայեր ու մշակներ ճշմա-
րիտ մարդասիրութեան:

Չէ՛ թէ դուք պէտք ունեւէք ընկերութիւններ,
այլ ընկերութիւններն էին, որ զգուս էին ձեր
պէտքը: Բայց և այնպէս ձեր պիտի ջերմ սրտով
համբարձէք էլք դուք նրանց: Ամեն տեղ, ուր
թիւն ամբողջ երկրագնդին երևան մտա-
նալ ու գիտնականացէս աշխատող բժիշկներ կա-
ն, ձեր խուզարկութիւնները բնանկարգերի
(Faserstoff), սպիտակ արեան, նորաձին մանուկ-
ների թղթերակները խցման և միգրացիոն (Harn-
säure-Infarkt) մասին, ձեզ գրկաբաց և հանդի-
սաւոր կերպով կընդունեն: Իսկ դուք, այդ օրե-
րում Բերլինը թողնելու ստիպված լինելով, խոս-
տովանալով էլք թէ ձեզ մեծ ցաւ ու կսկիւծ է
պատճառում հեռանալ այն մարդկանցից, որոնց
չըմանում, դուք առաջին անգամ հաղորդեցիք
ձեր փորձերի և վաստակների արգասիքը:

«Կա յայտարար է ձեր դէպքի մեր ընկերու-
թիւնը ունեցած յարաբերութեան, Վերլինըր-
գից ձեր վերադառնալուց յետոյ մինչև այսօր:
Դուք ոչ միայն նուիրել էք ձեր հարուստ հմուտ-
թիւնից ներքին, ճշմարիտ համոզմամբ, այլ և
հիմարտագէտ և սրտի խորքից սիրելով գործը—
մեր ընկերութեան գործը, սկզբից ի վեր ձեր
անձը յետ քաջված պահելով այդ ընկերութեան
մէջ:

«Բերլինի բժշկական ընկերութիւնը կազմվեց
երկու ընկերութիւնների միանալով, որոնց դուք
նախագահում էիք, գիտնական բժշկական ընկե-
րութիւնից և Բերլինի բժիշկների միաբանութիւ-
նից: Վերջինս ցանկացաւ իր նախագահին նոր
կազմված ընկերութեան նախագահ տեսնել, իսկ
դուք անմիջապէս հրաժարվեցիք այդ պատուար
պաշտօնից, յետ քաջվեցաք և թողեցիք այդ նա-
խաթողութիւնը մի ուրիշին: Բայց այդ ընկերու-
թեան հէջ առաջին նիստում դուք առաջին դա-
սախոսութիւնը կարգադրեց: Այսօր անշուշտ շատ
պատիւ և մեծարանք է հատուցում ձեզ և շատ է
խօսում ձեր մեծագործութիւնների մասին, սա-
կայն ձեր պատկառելի մեծութեան մի աւելի
մեծ վկայութիւն, ձեր ընկերներին ու բարեկամ-
ներին բերած անձնական գոհաբերութեան, ոչ
դէ կարող տալ:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, հոկտեմբերի 4-ին

Անցեալ հինգշաբթի, հոկտեմբերի 3-ին, առա-
ջին անգամ Սալմաստի ամբողջ հայ ժողովուրդը
միջոց ունեցաւ մասնակցելու ընդհանրական
կաթողիկոսի ընտրութեան գործին: Համաձայն
սրբազան առաջնորդի հրամանի՝ Զարեանդ գաւա-
ռի սուրբ Աստուածածնայ (դէրիկ) վանքի վանա-
հայր դերասպարիւ Բաղդասար Թաւադբեան վար-
դապետը, ուղարկելով յատուկ հրահրագրեր Սալ-
մաստի բոլոր գիւղերին, ժողով կազմեց Բաղդաս-
արի հայրենիք Գալաթիէի գիւղի եկեղեցւոյ առաջնոր-
դարանի մէջ, որը չինված է հանգուցեալ մեծ
գրողի պալանով և աշխատանքով, և որի դահլիճը
յարարեցրած է թատրոնական ներկայացումների
համար, որտեղ եղել են մի քանի անգամ ներկայա-
ցումներ և այն ժամանակից մինչև հիմա մնացել
են թատրոնական հանդերձների մի մասը և տեղա-
կան կարմիր շիրայից կարված մեծ վարագոյրը,
որը այդ օրը կարված էր դահլիճի ձախտի պա-
տի վրա, զարդարվելով ընդհանրական հայրենա-
սէր ներման պատրիարքի մեծազոր պատկերով,
որովհետև ոչ մի տեղ հանգուցեալ Մակար կաթո-
ղիկոսի պատկերը չը գտնվեց:

Դահլիճը, թէպէտ և երկար ժամանակ անխնամ
մնալուց չափից դուրս կեղտոտվել էր, ապակի-
ները միանգամայն ոչնչացել էին և պատերի
գաջը տեղ-տեղ սկսել էր քանդվել, սակայն այդ
օրվան ժողովին համար խնամքով մաքրված էր
և դեմքը ամբողջովին փոխված էր կարողանա-
նքով, իսկ պատերի մօտ միջնորդներով: Մի-
այն նախագահի թիւով առաջ զբաղ էր կա-
նալ մահաբեր ծածկված սեղան, որ մի առան-
ձին կոնսրաստ էր կազմում ասիական դահլիճի
հետ, որտեղ ժողովականները նստած էին պարս-
կական ձուկ երկու ծնկների վրա չըբած և ձեռ-
քերը պարզած աղբիւրների վրա:

Չը նայելով որ քսան գիւղից աւելի ստացել էին
հրահրագրեր, սակայն միայն տասնուչորս գիւղեր

ներկայացան իրանց քահանաներով: Մնացեալները
չը գալու պատճառը, ինչպէս իրանք էին խոստո-
ւանում, անտեղի երկուշն է եղել: Այդ ժողովուրդը
դարեւից ի վեր սովորել է տեսնել, որ իրանց դի-
մում են միայն կամ հարկ աւելացնելու հրա-
մանը տալու, կամ տուգանքներ առնելու, կամ
վերջապէս մի որ և իցէ լուծ դնելու իրանց վրին:
Այս անգամ էլ այդ հրահրագրերը ստանալով կար-
ծել էին թէ վարդապետը իր իշխանութեան տակ
գտնված աւերակ վանքի համար նպաստ և օգնու-
թիւն աւելի է պահանջէ. բայց երբ որ երեք ժա-
մից աւելի խօսելով հայր վարդապետին հետ չը
լսեցին նրանից ոչ մի անգամ կոպէկի անուն,
նոր փոշմանեցին, որ դուրս մնացին մի այդպիսի
ժողովից: Ժողովը բացվեց հանգուցեալ հայրապե-
տի յիշատակին հոգոց ասելով և որովհետև Սալ-
մաստի հայ ժողովուրդը երբեք չէր մասնակցած
հայրապետական ընդհանրական գործին և միան-
գամայն անծանօթ էր այդ գաղափարի հետ, որ
խրաբանչիւր չափահաս հայ մարդ կատարեալ
էրաւունք ունի ընտրել իր պատգամաւորը և
իրաւիչու իրաւունք ունենալ, հարկ եղաւ հայր
նախագահի կողմից մանրամասն բացատրութիւն-
ները մէջ մտնել հայրապետական գահին, սուրբ
Եւթիմիոսի ազգային նշանակութեան մասին և
այն իրաւունքների և պարտաւորութիւնների մա-
սին, որ փոխադրածապէս ունեն Ղուսասորչի
հօտը և նրա միջնորդ ժողովուրդը:

Բացատրութիւնից յետոյ նախագահը թախան-
ձելով խնդրեց ժողովին, որ «առանց ի նկատի
առնելով մարդկանց քսակները՝ հաստութիւնը,
հասարակական դիրքը և ձերմակ միութենքը՝
ընտրեն մի այնպիսի պատգամաւոր, որը բարոյա-
պէս այնքան հարուստ լինի՝ որ կաշառի հոտից
միանգամայն զրկելու ընդունակ լինի»:

Արանից յետոյ ձայների մեծամասնութեամբ ընտրվեց պատ-
գամաւոր Ղալասարցի պ. Գրիգոր Հարաթեան
Չանաղիզեանց—31 ձայնով, իսկ անձնափոխա-
նորդ փայաջուկի պ. Զիրարյէլ Բուրաղեանց—22
ձայնով:

Ժողովականները մնացին զո՛ւ այդ աջող ընտ-
րութիւնից: Ժողովը փակվեց պահպանելով և
հայրմերով ու բարեմաղթութիւններով ընդհանուր
հայրութեան համար:

Մի քանի ժամը էլ սուրբ Աստուածածնի նոր վե-
րահաստաւած վանքի մասին: Այս վանքը
գտնվում է Սալմաստի կենտրոնից շատ հեռու և
ընկած է այն ձորի մէջ, որ տանում է դէպի Տաճ-
կաստանի Հաղաբայ գաւառը և կոչվում է, «Գուշ-
ման-դարա» (Երջամուս ձոր), որովհետև այդ
ձանապարհը լինելով անմարդաբնակ միշտ վտան-
գաւոր է եղել անցնող քարվանսների համար,
որոնք յաճախ կողոպտվել են պարսից և տաճկաց
քրդերի ձեռքով: Քանի հարիւր տարի այդ
վանքը չէ ունեցել ոչ մի վանահայր վարդապետ,
ուստի միանգամայն աւերակ դրութեան մէջ էր
մնացել: Մի քանի տարի սրանից առաջ Սալմաս-
տի ժողովուրդից մի քանի հողի վերանորոգել էին
խոնարհված կաթողիկէն և շինել էին երկու հատ
փոքրիկ խրճիթներ: Այդ միջոցին Հաղաբայ սուրբ
Բարթողիմէոս վանքի վանահայր Գովհանէս վար-
դապետ Բոնուսին, հալածվելով վանի ազգային
վարչութիւնից՝ փախչում գալիս է Սալմաստ, խա-
բում է ժողովուրդին, թէ ինքն մեծ հարստու-
թիւն ունի և մտադիր է դէրիկը (ս. Աստուա-
ծածինը) վերաշինել: Ժողովուրդը հաւատաւոր նրա
խօսքին ամեն կերպ օգնում է նրան իր առատ
նուէրներով, այնպէս որ մի փոքր ժամանակից
յետոյ «դէրիկը» ունենում է երեք հարիւր դուլի
ոչնչատ և տաւար: Երբ դալիս է Գաւրէթ ս. Ստե-
փանոս եպիսկոպոսը՝ հրահրում է վարդապետին
գալ իր մօտ Գաւրէթ, իսկ Բոնուսին Գաւրէթ
գնալու տեղ, քրդերի օգնութեամբ կողոպտում է
վանքի եկեղեցին և նրա ամբողջ կաջը և տա-
ւարները՝ անցնելով նորից Տաճկաստան, որտեղ
կառավարութեան օգնութեամբ նորից ձեռք է
բերում Բարթողիմէոս վանքը, ուր այժմ նստած
է, ունենալով վանքի մէջ յիսուն հողի տաճիկ դի-
նուստներ իր պաշտպանութեան համար: Մի անգ-
ամ առաջ վանի պատրիարքական փոխանորդը պա-
հանջած էր Բոնուսին վան, ժողովուրդի բողոքնե-
րին պատասխանելու, բայց պատժի փոխարէն վա-
նին յիսուն զինուորներով վերադարձրեց նրան նորից
Հաղաբայ, որտեղ նա շարունակում է աւելի սա-
տկութեամբ իր նախկին չարագործութիւնները և
սպառնում է Ալեքեան պատրիարքին, որ եթէ
միւս անգամ էլ ներդաւիւն տալու լինեն՝ «ձեր-
մակ կը փաթաթի իր գլխին», այսինքն կը թուր-

քանայ: Այս դէպքից յետոյ վանքը նորից մնաց
առանց վանահօր, մինչև Բաղդասար վարդապետի
գալը, որը համարվում է հոգեւոր իշխանութեան
կողմից հաստատված առաջին վանահայր:

Վանքը մինչև այժմ մի թիւ անգամ հող չու-
նէր, որովհետև չըջապատող ահազին տարածու-
թեամբ հողերը պատկանում էին թուրք ազանե-
րին: Այժմ այդ հողի մի մասը գնված է վանքի հա-
մար, սակայն վանքը չուներաւով ընտելի հայ հո-
ղագործ և ինքն լինելով կատարեալ աւերակ
դրութեան մէջ, չէ կարող օգտվել հողի այդ
փոքրիկ մասից, որովհետև մինչև հողերը ամբող-
ջովին չառնվին թուրք ազաներից, ոչ վանքը
կարող է անտեսութեան կազմել, ոչ էլ հայ հողա-
գործը կը վստահանայ այդտեղ ապրել և աշխա-
տել: Գովհանէս վարդապետից յետոյ ժողովուրդը
միանգամայն կորցրել է իր վստահութիւնը և ոչ մի
կերպ չէ ուղում օգնել այդ նշանաւոր և քրդե-
րի մէջ ընկած խիստ աւերակ և կարեւոր սրբա-
վայրին:

Այս վանքից քսան քալէ հեռավորութեամբ դե-
պի արևմուտք, նեղ ձորի մէջ գտնվում է Վերին
Դէրիկը՝ կոչված քրդաբնակ գիւղը, որի մօտ
բնում են երկաթ-հանքային ջերմութիւնը 25.75
աստիճան տաքութեամբ: Թէ որպէս հիւանդնե-
ր և հիւանդութիւն ունեցողներ յաճախում են այս
կամ ուրիշ հանքային ջրերը, որոնց թիւը շատ և
չափ մասստում, մի ուրիշ անգամ:

Ալեք. Զարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պօլսից հեռագրում են, որ Նիկոպոլեան
արքեպիսկոպոս Նեֆթիտ տիեզերական պատ-
րիարք է ընտրված:

— Լօնդոնում կրկին լուրեր են պտտում քաղա-
քական ասպարեղից Գլադստօնի հեռանալու մա-
սին: Այդ առիթով Լօնդոնից հեռագրում են հե-
տեւանքը. «Վերջին օրերս աղատամիտ կուսակ-
ցութեան զինվորների մէջ խօսակցութեան ա-
ռարկայ են դնում հարցը, թէ Գլադստօնի հեռանա-
լու դէպքում ով պէտք է աղատամիտ կուսակ-
ցութեան առաջնորդ ընտրվի: Այժմ Գլադստօնի
հրաժարականը հաւանական է համարվում: Ուի-
լիամ Հարկուտ չէ կարող այդ տեղը զբաւել իր
աչքերի հիւանդութեան պատճառով: Նա, ասում
են, արդէն զրկվել է մէկ աչքից,—գոնէ ժամա-
նակաւորապէս: Միւս աչքը, որպէս ենթադրում
են, կարելի կը լինի փրկել օպերացիայի միջոցով:
Սակայն, Հարկուտի աչքերը հաղիւ թէ այնքան
առողջանան, որ նա կարող լինի կուսակցութեան
առաջնորդի պարտաւորութիւնները յանձն առնել:
Հարկուտի հրաժարականի դէպքում, կանդիդատ-
ներ համարվում են՝ Մորլէյ, Կէմպբել, Բաններ-
ման և Ֆրոլէյ: Ամենից շատ հաւանականութիւն
կայ, որ վերջինս կընտրվի:

— Բրադլիայի նախկին կայսր Գոն-Պէդրօ, «Ei-
gare» լրագրի աշխատակիցներից մէկի հետ խօ-
սակցելու ժամանակ յայտնեց, որ եթէ Բրադլի-
կայսրը միապետութիւնը վերականգնվի, ինքն,
չը նայելով իր դառնաւալ հասակին, կը վերա-
դառնայ այնտեղ, իր սիրած ժողովուրդի մէջ մեռ-
նելու համար:

— Պապի հիւանդութեան մասին «Paris» լրա-
գրի Հռօմի թղթակիցը նոյեմբերի 3-ից (նոր տօ-
մարով) հաղորդում է հետեւեալը. «Թէպէտ վատի-
կանից պապի ծանր հիւանդութիւնը գուցէ ոչ
մի հեռագիր չէ ստացվել, սակայն դուք կարող
էք հաստատ փաստ համարել, որ Լոն-ԱՄՈՒ-
նուրջական դրութիւնը շատ է վախեցնում նրա
չըջապատողներին: Եկող տարվայ մարտին կը
լրանայ Լոն-ԱՄՈՒ ութնուհին և երկու տարին, և
ամենաթիւթե հիւանդութիւնն անգամ կարող է
ճակատագրական վախճան ունենալ: Բայց հերքել
անկարելի է, որ պապը այնքան ծանր հիւանդ է, որ
սենեակից չէ կարողանում դուրս գալ և մինչև
անգամ անկողնից վերկենալ: Ի հարկէ, վատի-
կանում ամեն ջանք դրած են դնում ծածկելու
պապի հիւանդութեան վտանգաւոր բնաւորութիւ-
նը:

— «Times» լրագրի Թէհրանի թղթակիցը հա-
ղորդում է, որ Ժախխոտի մենապաշտպանութեան
իրաւունքը ձեռք բերող ընկերութիւնը, այժմ ա-
զատ կերպով ծխախոտ է գնում ամբողջ Պարս-
կաստանում, բացի Թաւրիզից, որի վերաբեր-
մամբ առանձին համաձայնութիւն կը կայանայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ	
Նորերում Զանուս, Խաւիայում, վախճանվեց պրինց Լիւսիէն Բօնապարտ, Լիւսիէնի, Նապո- լէօն I-ի եղբոր երկրորդ որդին: Հանդուցեալը ծնվել է 1813 թվին Անգլիայում, ուր ապրում էր նրա հայրը, կայսրի հետ կուսելուց յետոյ: Պատա- նակութեան ժամանակ պրինց Լիւսիէն շատ տա- րիներ ապրում էր Միացեալ Նահանգներում, ուր նա մեծ հմտութեամբ պարապում էր լեզուագի- տութեամբ և քիմիայով: Քաղաքականութեան մէջ նա եռանդով պաշտպանում էր իր հօրեղբոր որ- դի պրինց Նապոլէօնին, որը ղեկավարեց յե- ղափոխութիւնից յետոյ Լիւսիէն Բօնապարտին սենատոր նշանակեց: Քաղաքականութիւնը չէր արդելում նրա գիտնական դրադուներին լե- զուագիտութեան շրջանում, որոնց հետանք էին մի շարք շատ հետաքրքիր և ուրիշ հետաքրա- թիւններ: Հանդուցեալը Օկտօբրի համալսարանի պատուաւոր դոկտորի կոչում ունէր և Պետերբուր- գի գիտութիւնների ակադէմիայի պատուաւոր ան- դամ էր:	
* * *	
Գ. ամբ է տտայի սիրտը: Պարիզի շրջակա- ներում, Sevres-ում նոյեմբերի 8-ին պէտք է կա- յանայ հռչակաւոր Գամբետայի արձանի բա- ցումը: Արձանի ներսում պէտք է դրվի Գամբետ- տայի սիրտը, որը պահած ունի տիկին Պոլ-Բէթ: Արձանը կանգնեցնում են Պարիզում ապրող էլ- զաւ-թիւրիները:	
ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ	
ՀԻՍՏՈՒՄՆԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ	
ԵԱԼՍԱ, 5 հոկտեմբերի: Միամի պրինց Գամ- բետ հասաւ Եալտա: Երբ «Երկիրը» շոգնուաւ, որի առաջատար վրա ծածանում էր սիւսման դրօշակը, մօտեցաւ, Թագաւառանգ Յէսարեվիչ մօտա շոգնուաւ և ողջունեց պրինցին: Լիւսիէնա- յում, փոքրիկ պալատում պրինցին ընդունեց Թա- գաւոր կայսրը: Պրինցի սպիտակ կաշմում են մատաղահաս հօրեղբորօրդին, ծովային մինիստր Գիւ-Պէլաւի-Ռիշէի, քարտուղարը, Թարգմանը և չորս աստիճանաւորներ: Մասնաւոր հեռագիրը հաղորդում է, որ երեկ Բերլին հասաւ իշխան Բիւմարի, որին ժողովուրդը հիացմունքով դիմա- ւորեց: Բիւմարիկն սպասող հասարակութիւնը կտրեց ոտիկանները շղթան, քանդեց պատնէշը, ողջունում էր իշխանին երգեցողութեամբ, ձա- ռերով, ձեռքը սեղմելով, կանայք ծաղիկներ փունջեր էին թափում Բիւմարիի գլխին: Բիւ- մարի լաց եղաւ: Ասում են որ ընդհարումներ են եղել ոտիկանութեան հետ և կալանաւորում ներ:	
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ ԲՈՐՍԱ	
Նոյեմբերի 5-ին	
Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . . 106 ր. — Կ. Բերլինի վրա 100 մարկ . . . 52 > 05 > Փարիզի վրա 100 ֆրանկ . . . 42 > 25 > Ուլի . . . արծէ . . . 8 > 45 > Մաքսային կուպոններ . . . 168 > 50 > Արծաթ . . . 1 > 14 > Բորսային դիվիդենդներ . . . 61 1/2 > 8 > Պետ. բանկի 5% տոմս 1 շրջան . . . 100 > 25 > — — — 2-րդ — — — 100 > — > — — — 3-րդ — — — — > — > — — — 4-րդ — — — — > — > — — — 5-րդ — — — — > — > — — — 6-րդ — — — — > — > 60% ոսկեայ ընդամ . . . 170 > — > 40% ոսկեայ փոխառութիւն . . . — > — > Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . . — > — > — — — 2-րդ — — — 97 > 75 > — — — 3-րդ — — — 99 > 12 > Ներքին 5% առաջին փոխառութ. . . 234 > — > — — — երկրորդ — — — 215 > 50 > Պետական. երկաթուղային ընդամ . . . 102 > — > 5 1/2% ընդամ . . . — > — > 40% ներքին փոխառութիւն . . . 92 > 62 > 50% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի . . . — > — > Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . . 198 > 50 > 5 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի. 101 > 50 > 4 1/2% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետայ. . . 150 > — > — — — թղթային . . . 98 > 75 > Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրվադրականներ. . . 99 > — > Մոսկովայի քաղաք. օրվադրականներ. . . 98 > 75 > Օդէսայի . . . — > — > Թիֆլիսի . . . — > — > Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . . — > — > — — — փոխադրի . . . — > — > Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է:	
Խաղաղ-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ	

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱՐՊԻՆԿԱ ՀԻՒՍՈՒԱԾՔ

«Ա. ԲԵՆԴԵՐ, ՈՐԴԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՈՎ ԵՒ Վ. ԲԵՆԴԵՐ»

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԵՐԻ

ԱՌԵՆՏԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՈՎԻՑ

Յայտնում է թիֆլիսի պատեղի հասարակությանը, որ բաց է անում յատուկ մազազին սեփական պատրաստության սարպինկա ասված հիսուսածքը, աղյուղները և բամբակեղ գուլպաների գործուածները թիֆլիսում ծախելու համար:

Սարպինկա մի հիսուսածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այդ նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենաշքեղ զգեստներ, մանուկների զգեստներ և տղամարդկանց շապիկներ:

Մազազինը գտնվում է թիֆլիսում, Սոլոյակում, Աղաբաբովի տանը, որտեղ առաջ գտնվում էր Զիթախովի գրասենեակը:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՍ ՄԱՍ

2—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Է Վ Է Լ Ի Ն Ա

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ Հոգեբանական հոդույ.

Գինը 50 կոպեկ (պատի ծախսով)

Ծախվում է. «Մշակի» խմբագրատանը, խիբկեկի գրադաճառանոցում և Տէր-Յովսէփեանի ծխախոտի մազազինում, «Կովկաս» հիւրանոցի տակ:

1—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ 12-ին սոյն նոյեմբեր ամսի, առաւօտեան 12 ժամին, յիշեալ քաղաքային վարչութեան շինութիւնում լինելու է աճուրդ, Հաւարարի կանանց հիւանդանոցի շինութիւնը նորոգելու համար:

Ցանկացողները կարող են տեսնել ենթադրեալ նորոգութեան գործը 11-ին սոյն նոյեմբեր ամսի, առաւօտեան 10 ժամին, յիշեալ հիւանդանոցում, զիմելով քաղաքային ճարտարապետին:

1—2

ՌՈՒՍԱՑ

Յ Ի Ր Կ

Ն Ի Կ Ի Տ Ի Ն Ե Ղ Բ Ա Յ Ր Ն Ե Ր Ի

Առաջին ներկայացման բացումը

ԿԸ ԿԱՅԱՆԱՑ

Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 7-ին, 1891 թ.ի

ՍԿԻՉԲԸ 8 ժամին երեկոյեան.

Մանրամասնութիւնները պրոգրամներում:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ Այջ բացված է հանգանակութիւն կամաւոր նուիրատուութիւնների յօդուտ Ռուսաստանի ներքին նա-հանգների սովեալ գիւղական աղքատակութեան: Նուիրատուութիւնների ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ:

3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱ-ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 20-ին նոյեմբեր ամսի 1891 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու նոյն զարդի կալուածքը № 49 (ընծայած հանգուցեալ Գարուլին Ոքոյեանցից), որը գտնվում է Կուր գետի հեղեղատի «Սաղի» վրա: Պայմանադրութիւնը կարելի է կարգալ հոգաբարձութեան գիւանա-տան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

3—3

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարու-թիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՆՏԱԿԱՆ ՀԱՇԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տղաների լիակատար աղյուսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար, 10/0-ից մինչև 120/0 վաճառվում է եղբայր Ծովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Թիֆլիս, Կոթորայա լ., № 9. Օտարաքաղաքացիք զիմում են վերջին հասցէով՝ Ս. Ս. Մա-նուէլյանց:

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 կ. Գրադաճառներին զիւում կը լինի:

32—150

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Տեղափոխվել է Գոլովինսկի Պրոսպեկտ տ. Միլոսեվի, № 5, Թիֆլիսի ժողովարանի հանդէպ:

5—5

Լոյս տեսաւ և վաճառվում են թիֆլիսում կենտրոնական գրադաճառանոցում և «Տարաղի» խմբագրութեան մէջ, իսկ Շուշի—Արթաշատեանցի գրադաճառանոցում

1) Աղա-Մուհամմէդ Շահը Շուշում, գինը 2 կոպեկ:

2) Վիլհելմ Թէլլ, Լամարտին:

20

Թարգմանութիւն Հ. Առաքելեանի:

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր փահաւորված սենեակներ. օրը 60 կո-պեկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիւում է անվում:

Կիրակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСЬ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированныя номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

30—36

ПАРФЮМЕРІЯ
ВИКТОРІЯ РЕТИНА.
МЫЛО олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.
ДУХИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИСКРОНАКЪ И ВИОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
РАЗНЫХЪ ЦВѢТЧЫЙ
О-ДЕ-КОЛОНЪ ЗАНАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказ-скомъ Товариществѣ торговли апте-карскими товарами въ Тифлисѣ.

ПАРФЮМЕРІЯ
ВИКТОРІЯ РЕТИНА.
МЫЛО олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНГО.
ДУХИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИСКРОНАКЪ И ВИОЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
РАЗНЫХЪ ЦВѢТЧЫЙ
О-ДЕ-КОЛОНЪ ЗАНАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Кавказ-скомъ Товариществѣ торговли апте-карскими товарами въ Тифлисѣ.

Հոկտեմբերի 20-ից

ՊԱՏԱՀԱԿԱՆ

1891 թ.ի

Վ Ի Է Ն Ն Ա Յ Ի Մ Ա Գ Ա Ջ Ի Ն

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ

ԶԳԵՍՏՆԵՐԻ

Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՑ ԵՂԱՅՐՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Գոլովինսկի պրոսպեկտում, I զիմնադրայի զիմաց, տուն Միլոսեվի

ԱՇՆԱՆ ՍԷՉՈՆԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Միայն 30 օրվայ ընթացքում:

Կը լինի

ՎԱՃԱՌՈՒՄՆ Բոլոր եղած ապրանքների այլ և այլ գործարանների 30% պակաս քան ֆաբրիկաների գները: Բացի Ս. ԿԱՄԼԵՏԻ ֆաբրիկայից: Մազազինը ուշադրութիւն է դարձնում մանաւանդ մարդկանց համար ստաց-ված մուշտակների, պայտների և զգեստների ՄԵԾ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ վրա: Այդ ապ-րանքները իրանց նոր ձևերի, իրանց նիւթի յատկութեան և արտաքին տեսքի կողմից զիմնադրու են ամեն տեսակ ՄՐՅՄԱՆ: Բոլոր այդ ապրանքները մենք առել և մեր հսկողութեան տակ պատրաստել ենք տուել ՄՐՅՄԱՆ:

4—9

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է սրանով, որ ընկերութեան 1891 թ.ի անդամները կարող են ստանալ կենտրոնական գրադաճառանոցի ընկերութեան հետեալ հրատարակութիւնները.

- 1) Տօլստոյ—Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը:
- 2) Վալտեր—Հաւատարմ Սովորին:
- 3) Պէտտսոյցի—Լինհարդ և Գէրարդը:
- 4) Նալ և Գամայանտի:
- 5) Ռոզենշտայն—Նաւի փոքրաւորը:
- 6) Սպիլերի—Ուռնեց Յովսէփ:

10—13



ВЪРНАЯ СМЕРТЬ.

„ՄԻՇՈՒՆԱՑ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաղուում Բարձրագոյն հաստատված զինդատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

47—50 (5)